

«ԺԱՄԱՆԱԿԻ ԱՆԻՎԸ» ԱՆՆԱԽԱԳԴԵՊ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Posted on December 10, 2022 by Keghart




Category: [Opinions](#)



Սամվել Խալաթյան, Երևան, 6 Դեկտեմբերի 2022

Նոյեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 10-ը Երևանի Հովհաննես Շարամբեյանի անվան Ժողովրդական արվեստի թանգարանում աննախադեպ ցուցահանդես է: Տարօրինակ ազդագիր ունի՝ **Մոնի Հովսեփյան, «Ժամանակի անիվը» անհատական ցուցահանդես, քվիլտի (շերտակտավի) ստեղծագործություններ:**

Նույնիսկ նրանք, ովքեր այս կամ այն չափով տեղյակ են, թե ինչ բան է այդ **quilt**-ը, նկարչուհու առաջին իսկ գործերը դիտելով անակնկալի են գալիս: Նոր, անձանոթ ձև ու միջոցներով, կտորե դրվագային զարդանախշերով, միմյանց ազուցված լաթերով շրջանակված ստեղծագործությունները, գունահանդեսային և վերացական ներդմբռնողությամբ հմայիչ են և գեղագիտորեն ընդունելի:



Առաջին պահին դիտողն ի միտ է բերում անցյալում մեր տատիկ-մամիկների կողմից գույնզգույն լաթերով կարկատած, «խճանկարային» այն վերմակները, բարձի երեսները, գոգնոցներն ու ծածկոցները, որոնք աչքի էին ընկնում իրենց գունային ներդաշնակությամբ:

Թերևս, դա միայն հայերին հատուկ արհեստագործությունն չէր, որովհետև, վերջին տարիներին, որոշ երկրներում ի հայտ եկան կտորեղենի և այլ նյութերի բազմապատիկների համակցումով դեկորատիվ, կիրառական բնույթի գործեր, որոնք **quilt** ընդհանրական անունն ստացան:

Սակայն, Մոնի Հովսեփյանի ստեղծագործությունները կտորեղենի լաթերով սոսկ համակցումներ չեն, այլ գեղարվեստական ավարտուն գործեր՝ ներքին կառուցվածքի, գունային արտահայտչականության, ենթատեքստի ու դրանցում ամփոփված գաղափարի ամբողջությամբ:



Հատված «Երախտագիտություն՝ դարի երկայնքով» շերտանկարից

Ասեղնագործությամբ, տպագրությամբ, վրձնադրոշմների հորինվածքներով նկարչուհին ազգային մշակույթի խորհրդանիշներով նոր մեկնաբանություններ է մատուցում՝ եռաչափ, խոսուն մակերեսների նուրբ դարսդարսումով: Սա կատարողական արվեստի մի նոր տեսակ է, իրագործված Հայաստանում՝ առաջին ու առայժմ միակ արվեստագետի կողմից, և հենց ինքն էլ տվել է դրա հայերեն անվանումը՝ **շերտակտավ:**

Ցուցահանդեսում առանձնակի աչքի ընկնող աշխատանքն, անշուշտ,

«Երախտագիտություն՝ դարի երկայնքով» ստեղծագործությունն է, որի վրա Մոնին աշխատել է շուրջ կես տարի: Շերտակտավը արվեստագետի երախտագիտության արտահայտությունն է նորվեգացի բեռնախույզ, հումանիստ Ֆրիտյոֆ Նանսենին, որի ջանքերով 1922 թ.-ին ստեղծվեցին «Նանսենի անձնագրերը»՝ Հայոց ցեղասպանությունից մազապուրծ 320 հազար հայի հնարավորություն տալով քաղաքացիություն ստանալ աշխարհի 52 երկրում:



Հատվածներ «Երախտագիտություն՝ դարի երկայնքով» շերտանկարից

Մոնի Հովսեփյանը մտադրվել է ցուցահանդեսից հետո այդ աշխատանքը նվիրել Նորվեգիայում Լիսակերում գործող Նանսենի թանգարան-ինստիտուտին:

Խորհրդանշային և իրական պատկերների համակցումով արված կտավի կենտրոնում ժամանակային գոտիների նմանողականությամբ շերտավորված ժամանակի անիվ-երգրագունդն է, որը, հեղինակի մտահղացմամբ, արտահայտում է տարբեր ժամանակներում մարդկության մեջ անընդհատ կրկնվող, ողբերգական՝ երևույթները: Ներքին լարումով աչքի ընկնող զարդանախշերի համայնապատկերում աչքի են զարնում հայ գաղթականների լուսանկարային պատկերներ, որոնց հուշած գաղափարը հարստացվում է Նանսենի կիսադեմով, նրա անձնագրերի, գրառումների պատառիկներով, կնքված փաստաթղթի հատվածով և այլն:

Մեծ հետաքրքրությամբ են դիտվում նաև գեղագիտորեն վայելուչ մյուս կտավները, որոնք, գունային ներդաշնակությամբ ու պատկեր-ձևերի առանձնահատուկ ներկայացումներով հոգեվիճակների արտահայտություն են ու նաև մի-մի ձոն լինեն ասես՝ նվիրված մեզ շրջապատող աշխարհի թաքնագիր գեղեցկությանը:

Նշենք, որ Մոնի Հովսեփյանը մասնագիտությամբ գծանկարիչ է: Խոստովանում է, որ ինքն ունի գույնի լավ զգացողություն, բայց չունի գեղանկարչի տեխնիկա: «Ես մեծ հաճույք եմ ստանում իմ ստեղծագործական գործընթացից, որին պատահականորեն առնչվեցի, երբ հանգամանքների բերումով Մոսկվայում էի ապրում,- պատմում է նա,- ասեղնագործության նմուշներ էի փնտրում, երբ առընչվեցի քվիլտին և մտիղացա այդ ձևի մեջ միավորել նկարչությունը, նախագծումը, ասեղնագործությունը,

տպագրությունը ...»:

Այդուհետ հաճախում է դասընթացների և կարճ ժամանակ անց, հայկական մանրանկարչության պատկերների ներմուծմամբ ստեղծված աշխատանքով մասնակցում համառուսաստանյան փառատոնին: Որից հետո հավակնում է դեկորատիվ զարդանախշերով բարձրի և ներքին տարածության ձևավորման համար նախատեսված գործերով ներկայանալ համաեվրոպական ցուցադրության: Արվեստագետները բարձր են գնահատում նրա գործերը, և դրանից ոգևորված Մոնին էլ ավելի է զարգացնում նորագյուտ ստեղծագործությունները, մինչև որ հասնում է այն բարձրարժեք վիճակին, որն ամփոփվեց Երևանյան ցուցահանդեսում ներկայացված 7 ստեղծագործությամբ:



Շերտանկարներ

Նոր զարգացումներ կունենա՞, արդյոք, շերտակտավը, դժվար է ասել: Կարևորը, որ հայուհի արվեստագետն արդեն գտել ու հանրահայտ է դառնում դրանցով:

Ցուցահանդեսի մասին Հանրային հեռուստատեսության տեսալուրը կարող եք դիտել այս հղումով՝

<https://youtu.be/wtcjLSLJsI8>

Շերտանկարների թարթվող հավաքածուն կարող եք դիտել այս հղումով՝

https://youtu.be/g_2DbalXPkI

There are no comments yet.